ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՈՒՅ-ԳՀԱՊՁԲ-17/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի /շինանյութերի ձեռքբերում/

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 22.08.2017թ. ժամը 16.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյան

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Դ. Հարությունյան
Գ. Աղումյան
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/ Ա. Հովհաննիսյան
Լ. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ/ Մ. Նիկոլյան

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 17.08.2017թ. հարցում է ուղարկվել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ», «Էկոմիքս», «Ֆոտոն» ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 14.08.2017թ. թիվ 2 որոշմամբ, համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, էլեկտրոնային փոստի միջոցով «ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ», «Էկոմիքս», «Ֆոտոն» ՍՊ ընկերություններին ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ», «Էկոմիքս», «Ֆոտոն» ՍՊ ընկերությունների վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 «ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ», «Էկոմիքս», «Ֆոտոն» ՍՊ ընկերությունների սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մինչև 23.08.2017թ. ներկայացվել են էլեկտրոնային փոստով /կցվում են/:

22.08.2017թ.-23.08.2017թ. փաստաթղթերը փոխանցվել են գնահատող հանձնաժողովին՝ գնահատելու նպատակով:

Ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- «ԷՔՍՏԵՐԻԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ներկայացրած փաստաթղթերում՝ հավելված 6.1-ով սահմանված 5 չափաբաժնով առաջարկվող ապրանքի բնութագրում պահանջվել է հստակեցում՝ յուղաներկի վրձնի տրամագծի վերաբերյալ:
- «Էկոմիքս» ՍՊԸ կողմից՝ Հավելված 6-ով սահմանված Դիմումը ներկայացվել է ՀՀՈՒՅ-ԳՀԱՊՁԲ-17/11 ծածկագրով հրավերի պահանջներին ոչ համապատասխան: